

ՍԱՂՄՈՍ 9

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍՏՐՈՖ ԲԱԺԱՆՈՒՄՆԵՐ

NASB	NKJV	NRSV	TEV	NJB
Աստծո արդարության համար գովարանությանը սաղմոս	ՏԻՐՈՋ արդար դատաստանների համար աղոթք և գոհություն	Անձնական թշնամիներից ազատվելու աղոթք (Սաղմոս 9-10, Ողբ)	Գոհություն Աստծուն Իր արդարության համար	Աստված զարկում է ամբարշտին և փրկում խոնարհին (Սաղմոս 9-10) Ակրոստիկոս
<u>MT նախաբան</u> «Դավթի սաղմոսը, գլխավոր երաժշտին, Մութաբենի եղանակով»				
9:1-2	9:1-2	9:1-2	9:1-2	9:1 (ԱյնՖ) 9:2
9:3-6	9:3-5	9:3-4 9:5-6	9:3-4 9:5-6	9:3-4 (Բեկթ) 9:5-6 (Գիսեդ)
9:7-10	9:6-8	9:7-8	9:7-8	9:7-8 (Հե)
9:11-16	9:9-10 9:11-12	9:9-10 9:11-12	9:9-10 9:11-12	9:9-10 (Վալ) 9:11-12 (Չային)
9:17-20	9:13-14 9:15-16 9:17-18	9:13-14 9:15-16 9:17-18	9:13-14 9:15-16 9:17-18	9:13-14 (Իսեթ) 9:15-16 (Թեթ) 9:17 (Եոդ) 9:18 (Բաֆ)
	9:19-20	9:19-20	9:19-20	9:19-20

ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ ԵՐՐՈՐԴ ՑԻԿԼ («Մուրբ Գիրքը ճիշտ կարդալու ուղեցույց») ԸՍՏ ՊԱՐԲԵՐՈՒԹՅԱՆ ԲՆԱԳՐԻ ՀԵՂԻՆԱԿԻ ՆՊԱՏԱԿԻ ՀԵՏՔԵՐՈՎ

Սա սերտողության ուղեցույց մեկնություն է, որը նշանակում է, որ դուք եք պատասխանատու Աստվածաշնչի ձեր մեկնության համար: Մեզնից յուրաքանչյուրը պետք է քայլի իր ունեցած լույսի ներքո: Մեկնարանության մեջ հերթականությունը հետևյալ կերպ է՝ դուք, Աստվածաշունչը և Մուրբ Հոգին: Դուք չպետք է այն զիջեք որևէ մեկնաբանի:

Մեկ անգամ նստելով կարդացեք ամբողջ գլուխը: Գտեք թեմաները: Համեմատեք ձեր թեմաների բաժինները հինգ ժամանակակից թարգմանությունների հետ: Պարբերությունները ներշնչանքով չեն կատարված, սակայն դրանք կարևոր են բնագրի հեղինակի նպատակին հետևելու համար, որը հանդիսանում է մեկնաբանության սիրտը: Յուրաքանչյուր պարբերություն ունի միայն մեկ թեմա:

1. Առաջին պարբերություն
2. Երկրորդ պարբերություն
3. Երրորդ պարբերություն
4. Եվ այլն

ՀԱՄԱՏԵՔՍԱՅԻՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ա. Նոր Երուսաղեմի Աստվածաշունչը (NJB) հաստատում է, որ Սաղմոս 9 և Սաղմոս 10 ձևավորում են թեթև ակրոստիկոս (տես՝ LXX):

Բ. Ակրոստիկոսը պոեզիայի հատուկ տեսակ է: Որպեսզի յուրաքանչյուր տառը համապատասխանի՝

1. հազվադեպ բառեր են կիրառվում
2. բառերի հազվադեպ տեսակներ
3. հանդիպում են պոեզիայի լարված տողեր
4. հանդիպում են անսովոր փոխաբերություններ և այլաբանական լեզու
5. ՆԱԽԴԻՐՆԵՐԻ կիրառություն

Հնում մարդկանց թվում էր, թե այբուբենն ուներ կախարդական նշանակություն (այսինքն՝ Կարալայի, Ռաս Շամրայի տեքստերը):

ԲԱՌԵՐԻ ԵՎ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

NASB (ԹԱՐՄԵՅՎԱԾ) ՏԵՔՍ. ՍԱՂՄՈՍ 9:1-2

¹Փառաբանելու եմ *Քեզ*, ո՛վ **ՏԵՐ**, իմ ամբողջ սրտով,

Պատմելու եմ **Քո** բոլոր հրաշալի գործերի մասին:

²Քեզանով եմ ուրախանալու ու ցնծալու,

Քո անվանը սաղմոս եմ երգելու, ո՛վ **Բարձրյալ**:

9:1-2 Բացման այս պարբերությունն ունի հինգ ԸՂՁԱԿԱՆ.

1. Փառաբանելու եմ – BDB 392, KB 389, *Hiphil* ԱՆԿԱՏԱՐ՝ կիրառված ԸՂՁԱԿԱՆ իմաստով
2. Պատմելու եմ – BDB 707, KB 765, *Piel* ԸՂՁԱԿԱՆ
3. Ուրախանալու եմ – BDB 970, KB 1333, *Qal* ԸՂՁԱԿԱՆ
4. Ընծալու եմ – BDB 274, KB 273, *Piel* ԸՂՁԱԿԱՆ

Այս բոլորը առնչվում են ՅԱՀՎԵԻ հետ (այսինքն՝ Բարձրյալի): Գոհությունը և փառաբանությունը մարդկանց պարտականությունն են: Սրանք նշան են՝ վկայություն Աստծո հետ ամենօրյա մտերմիկ, անձնական փոխհարաբերության:

Ուշադրություն դարձրե՛ք չորս «ես անելու եմ» խոսքերին Սաղմոս 9:1-2-ում, որոնք հիմնված են Սաղմոս 9:4-6-ում առկա հինգ «Դու . . . ես» արտահայտությունների վրա: ՅԱՀՎԵՆ գործել է: Այժմ Նրա հետևորդները կարող են փառաբանել Նրան:

9:1 «իմ ամբողջ սրտով» Սա երբայերեն դարձվածք է լիակատար նվիրման համար (տես՝ Սաղմ. 86:12, 111:1, 138:1, 3 Թագ. 8:23,61, 11:4, 1 Մնաց. 28:9): Տե՛ս Հատուկ Թեման. Միքս:

NASB, NJB,

JPSOA

NKJV

NRSV, REB, LXX

«հրաշքները»

«հրաշալի գործերը»

«սքանչելի գործեր»

Սա երբայերեն ԿԱՉՄՈՒԹՅՈՒՆ է (BDB 481 և BDB 810, *Niphal* ԱԾԱԿԱՆԸ): Տե՛ս ստորև տրված Հատուկ Թեման:

**ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ . ՍՔԱՆՉԵԼԻ ԲԱՆԵՐ (ՀԿ)
SPECIAL TOPIC: WONDERFUL THINGS (OT)**

Այս բառը (BDB 810, KB 927) արտահայտում է գործողություններ, որոնք մարդիկ իրենք չեն կարող իրականացնել կամ անգամ բացատրել, գործեր, որոնք հրաշքների և զարմանքի պատճառ են դառնում (տես՝ Ծննդ . 18:14, Երեմ . 32:17,27, Չաք . 8:6):

ԲԱՅԸ՝

1. Ելիցը՝ Ել . 3:20, 34:10, Միք . 7:15
2. Պատուհասները՝ 2 Օր . 28:59
3. Հորդանանն անցնելը՝ Հեսու 3:5
4. Աստծո անցյալի դեպքերը՝ Դատ . 6:13, 1 Մնաց . 16:9, 12, 24, Նեեմ . 9:17
5. Սամսոնի ծնունդը՝ Դատ . 13:19
6. Հովնաթանի հանդեպ Դավթի սերը՝ 2 Թագ . 1:26
7. Հանախ Հորի գրքում՝ 5:9, 9:10, 10:16, 37:5,14, 42:3
8. Սաղմոսներում երեսուն երկու անգամ
9. ՅԱՀՎԵԻ խորհուրդը՝ Ես . 28:29
10. ՅԱՀՎԵԻ գործերը՝ Ես . 29:14 (երկու անգամ), Հովել 2:26

ԳՈՅԱԿԱՆԸ

1. Ելիցը՝ Ել . 15:11, Սաղմ . 77:11,14, 78:12
2. մեռելների հետ կապված՝ Սաղմ . 88:10,12
3. երկինքը փառաբանում է ՅԱՀՎԵԻ գործերը՝ Սաղմ . 89:5
4. ՅԱՀՎԵԻ օրենքները՝ Սաղմ . 119:129
5. ՅԱՀՎԵԻ Մեսիան՝ Ես . 9:6
6. ՅԱՀՎԵԻ գործերը՝ Ես . 25:1, 29:14
7. վերջին ժամանակի դեպքերը՝ Դան . 12:6

Աստված գործում է հզոր, փրկող կերպերով՝ հայտնելու Իրեն Իր մեծագույն ստեղծագործությանը (մարդկությանը): Նա ուզում է, որ նրանք ճանաչեն Իրեն և վստահեն: Նրա գործերը հայտնություն են, այդ գործերի արձանագրումը՝ ներշնչանք, իսկ այդ գործերի հասկացողությունը՝ լուսավորում: ՅԱՀՎԵՆ ուզում է, որ աշխարհը ճանաչի Իրեն: Տե՛ս հետևյալ Հատուկ Թեմաները՝

1. Հատուկ Թեմա . Ճանաչել
2. Հատուկ Թեմա . Ներշնչանք
3. Հատուկ Թեմա . Լուսավորում:

9:2 «Քեզանով . . Քո անվանը» Սրանք գուգահեռներ են: Նկատե՛ք երկրպագության մեջ անձնական տարրը: Տե՛ս Հատուկ Թեմա . ՅԱՀՎԵԻ անունը:

NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. ՍԱՂՄՈՍ 9:3-6

- ³Երբ թշնամիներս վերադառնան,
Քո ներկայությունից կընկնեն ու կկորչեն,
⁴Քանի որ իմ իրավունքն ու դատը Դու՛ տեսար,
Աթոռին ես նստում՝ արդարությամբ դատելով:
⁵Հեթանոսներին հանդիմանեցիր, ամբարիշտներին կործանեցիր,
Նրանց անունները ջնջեցիր՝ հավիտյանս հավիտենից:

**Ո՛վ թշնամի, ավերմունքները մշտական վերջի են հասել,
Քաղաքները կործանեցիր, նրանց հիշատակն իրենց հետ կորավ:**

9:3-6 Այս պարբերությունը մեծարում է ՅԱՀՎԵԻՆ որպես Արդար Դատավոր (տես՝ Սաղմ. 9:4բ):

Ուշադրություն դարձրեք Նրա գործողություններին, որոնք ուղղված են թշնամիների դեմ:

1. թշնամիներս վերադառնան՝ Սաղմ. 9:3ա – BDB 996, KB 1427, *Qal* ԱՆՈՐՈՇ ԿԱԶՄՈՒԹՅՈՒՆ (այսինքն՝ պատերազմում):
2. թշնամիները կրնկենն՝ Սաղմ. 9:3բ – BDB 505, KB 502, *Niphal* ԱՆԿԱՏԱՐ
3. թշնամիները կկորչեն՝ Սաղմ. 9:3բ – BDB 1, KB 2, *Qal* ԱՆԿԱՏԱՐ
4. հեթանոսներին /ազգերին հանդիմանեցիր՝ Սաղմ. 9:5ա – BDB 172, KB 199, *Qal* ՎԱՂԱԿԱՏԱՐ (NET Աստվածաշունչը դիտարկում է սա որպես «պատերազմի կանչին» վերաբերող խոսք, էջ՝ 858, #19):
5. ամբարիշտներին կործանեցիր՝ Սաղմ. 9:5ա – BDB 1, KB 2, *Piel* ՎԱՂԱԿԱՏԱՐ
6. նրանց անունները ջնջել ես՝ Սաղմ. 9:5բ – BDB 562, KB 567, *Qal* ՎԱՂԱԿԱՏԱՐ (այսինքն՝ մահացել են պատերազմում)
7. թշնամիների քաղաքները կործանել ես՝ Սաղմ. 9:6 – BDB 684, KB 737, *Qal* ՎԱՂԱԿԱՏԱՐ

Ուշադրություն դարձրեք, թե ինչպես է ՅԱՀՎԵՆ նկարագրվում՝

1. իմ իրավունքն ու դատը Դու տեսար
2. աթոռին ես նստում՝ արդարությամբ դատելով
3. տես՝ Սաղմ. 9:7-8 (շեշտադրումը կրկնվում է հաջորդ պարբերության մեջ)

Հնարավոր է, որ «արդար դատը» ՅԱՀՎԵՒ կողմից սաղմոսերգուին Թագավոր կարգելն է Իր ուխտի ժողովրդի վրա:

9:3 «Քո ներկայությունից կկորչեն» Նկատելք, որ այս ԲԱՅԸ (BDB 1, KB 2) կրկնվում է Սաղմ. 9:5, 6, 18-ում: Այն գործածվում է՝

1. անհատ թշնամիների համար
2. ազգերի համար
3. նեղյալի (մերժվածի) համար

Այն ակնհայտ կերպով վերաբերում է ֆիզիկական կյանքին, սակայն նաև հավիտենականին (տես՝ Սաղմ. 9:6, եբրայերեն դարձվածք): Աստծուն և Նրա ժողովրդին հակառակվելը վտանգավոր գործունեություն է ժամանակավոր և վախճանաբանական հետևանքներով:

9:5 «ազգերը/հեթանոսները» Միևնույն անցումը անհատից դեպի «ազգերը» (տես՝ Սաղմ. 9:17-20) տեղի է ունենում Սաղմ. 7:6-7-ում: Շատ սաղմոսներ, գրված անհատների կողմից, դարձել են հավաքական պաշտամունքի օրհներգ:

Նաև նկատեք, որ ՅԱՀՎԵՆ ներկայացվում է որպես Դատավոր Սաղմոս 7:7-ում (տես՝ Սաղմ. 9:4-6, 7-8):

❖ **«նրանց անունները ջնջեցիր հավիտյանս հավիտենից»** Ուշադրություն դարձրե՛ք, թե ինչպես է «մշտական» դատաստանի թեման կրկնվում (տես՝ Սաղմ. 69:28):

1. ջնջեցիր՝ Սաղմ. 9:5 (*Qal* ՎԱՂԱԿԱՏԱՐ, տես՝ Սաղմ. 69:28, նաև՝ Թվոց 5:23, 2 Օր. 9:14, 25:19, 29:20):
2. հավիտյանս հավիտենից՝ Սաղմ. 9:5 (տես՝ ստորև տրված Հատուկ Թեմա. Հավիտյան)
3. ավերմունքներ՝ Սաղմ. 9:6 (*Piel* ՎԱՂԱԿԱՏԱՐ, տես՝ Երեմ. 25:9, 49:13)
4. նրանց հիշատակն իրենց հետ կորավ՝ Սաղմ. 9:6 (*Qal* ՎԱՂԱԿԱՏԱՐ, տես՝ Սաղմ. 34:16, 109:15)

Սաղմոս 9:5-6 հիշեցնում է ինձ Մաղաքիա 1-ի բացման երկխոսությունը, որտեղ Իսրայելի հենց գոյությունը հակադրվում է Եդովմի լիակատար մահվան հետ, որպես ՅԱՀՎԵԻ ուխտի սիրո ապացույց: Ուր են նրան շրջապատող հնագույն ազգերը: Նրանք կորած են պատմության մեջ, բայց Իսրայելը՝ ոչ:

«Ձնջել» ԲԱՅԸ (#1) կարող է վերաբերել կյանքի գրքին:

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՀԱՎԻՏՅԱՆ ('OLAM)

SPECIAL TOPIC: FOREVER ('OLAM)

Եբրայերեն *'olam*, օլոմ (BDB 761, KB 798) տերմինի ստուգաբանությունը անհայտ է (NIDOTTE, հատոր՝ 3, էջ՝ 345): Այն կիրառվում է մի քանի նշանակությամբ (սովորաբար որոշվում է ըստ համատեքստի): Հետևյալ օրինակները միայն հաստիքի են՝

1. Հնագույններ՝

ա. ժողովուրդներ, Ծննդ. 6:4, 1 Թագ. 27:8, Երեմ. 5:15, 28:8

բ. տեղանքներ, Ես. 58:12, 61:4

գ. Աստված, Սաղմ. 93:2, Առակ. 8:23, Ես. 63:16

դ. առարկաներ, Ծննդ. 49:26, Հոբ 22:15, Սաղմ. 24:7,9, Ես. 46:9

ե. ժամանակներ. 2 Օր. 32:7, Ես. 51:9, 63:9,11

2. Ապագա ժամանակներում՝

ա. մարդու կյանքը, Ելից 21:6, 2 Օր. 15:17, 1 Թագ. 1:22, 27:12

բ. թագավորի հանդեպ հարգանքի չափազանցություն, 1 Թագ. 1:31, Սղմ. 61:7, Նեեմ. 2:3

գ. շարունակական գոյություն

(1) Երկիրը, Սաղմ. 78:69, 104:5, Ժող. 1:4

(2) Երկինքները, Սաղմ. 148:5

դ. Աստծո գոյությունը

(1) Ծննդ. 21:33

(2) Ելից 15:18

(3) 2 Օր. 32:40

(4) Սաղմ. 93:2

(5) Ես. 40:28

(6) Երեմ. 10:10

(7) Դան. 12:7

ե. ուխտը

(1) Ծննդ. 9:12,16, 17:7,13,19

(2) Ելից 31:16

(3) Դևտ. 24:8

(4) Թվոց 18:19

(5) 2 Թագ. 23:5

(6) Սաղմ. 105:10

(7) Ես. 24:5, 55:3, 61:8

(8) Երեմ. 32:40, 50:5

զ. Դավթի հետ հատուկ ուխտը

(1) 2 Թագ. 7:13,16,25,29, 22:51, 23:5

(2) 3 Թագ. 2:33,45, 9:5

(3) 2 Մնաց. 13:5

(4) Սաղմ. 18:50, 89:4,28,36,37

(5) Ես. 9:7, 55:3

է. Աստծո Մեախան

- (1) Սաղմ. 45:2, 72:17, 89:35-36, 110:4
- (2) Եսայի 9:6

ը. Աստծո օրենքները

- (1) Ելից 29:28, 30:21
- (2) Ղևտ. 6:18,22, 7:34, 10:15, 24:9
- (3) Թվոց 18:8,11,19
- (4) Սաղմ. 119:89,160

թ. Աստծո խոստումները

- (1) 2 Թագ. 7:13,16,25, 22:51
- (2) 3 Թագ. 9:5
- (3) Սաղմ. 18:50
- (4) Եսայի 40:8

ժ. Աբրահամի սերունդները և Ավետյաց Երկիրը

- (1) Ծննդ. 13:15, 17:19, 48:4
- (2) Ելից 32:13
- (3) 1 Մնաց. 16:17

ի. ուխտի տոները

- (1) Ելից 12:14,17,24
- (2) Ղևտ. 23:14,21,41
- (3) Թվոց 10:8

լ. հավիտենություն, հավիտենական

- (1) 3 Թագ. 8:13
- (2) Սաղմ. 61:7-8, 77:8, 9:2, 103:17, 145:13
- (3) Եսայի 26:4, 45:17
- (4) Դան. 9:24

խ. Ի՞նչ են անելու հավատացյալները հավիտյան, ըստ Սաղմոսների

- (1) գոհանալու են, Սաղմ. 30:12, 79:13
- (2) բնակվելու են Նրա ներկայության մեջ, Սաղմ. 41:12, 61:4,7
- (3) վատահելու են Նրա ողորմությանը, Սաղմ. 52:8
- (4) փառաբանելու են Տիրոջը, Սաղմ. 52:9
- (5) օրհնություն են երգելու, Սաղմ. 61:8, 89:1
- (6) Նրա արդարությունն են պատմելու, Սաղմ. 75:7-9
- (7) փառավորելու են Նրա անունը, Սաղմ. 86:12, 145:2
- (8) օրհնելու են Նրա անունը, Սաղմ. 145:1

ծ. կիրառված Եսայի գրքում՝ նկարագրելով նոր դարը

- (1) հավիտենական ուխտ, Ես. 24:5, 55:3, 61:8
- (2) ՅԱՀՎԵՆ որպես հավիտենական Ժայռ, Ես. 26:4
- (3) հավիտենական ուրախություն, Ես. 35:10, 51:11, 61:7
- (4) Հավիտենական Աստվածը, Ես. 40:28
- (5) հավիտենական փրկություն, Ես. 45:17
- (6) հավիտենական ողորմություն (Hesed), Ես. 54:8
- (7) հավիտենական նշան, Ես. 55:13
- (8) հավիտենական անուն, Ես. 56:5, 63:12,16
- (9) հավիտենական լույս, Ես. 60:19,20

Ամբարիշտների հավիտենական պատժի վերաբերյալ բացասական կիրառությունը կարելի է գտնել Եսայի 33:14-ում՝ «հավիտենական կրակ»: Եսային հաճախ

կիրառում է «կրակ» բառը՝ նկարագրելու Աստծո բարկությունը (տես՝ Ես. 9:18,19, 10:16, 47:14), սակայն միայն Ես. 33:14-ում այն կիրառված որպես «հավիտենական»:

3. թե՛ ժամանակից առաջ և թե՛ հետո (հավիտենությունից հավիտենություն)

ա. Սաղմ. 41:13 (փառաբանություն Աստծուն)

բ. Սաղմ. 90:2 (Աստված Ինքը)

գ. Սաղմ. 103:17 (Տիրոջ ողորմությունը)

Հիշեք, որ ենթատեքստն է որոշում տերմինի նշանակության չափը: Հավիտենական ուխտերը և խոստումները պայմանական են (այսինքն՝ Երեմիա 7, տես՝ Հատուկ Թեմա. Ուխտ): Չգույշ եղեք ժամանակի վերաբերյալ ձեր ունեցած արդի աշխարհայացքը կամ ՆԿ-յան համակարգված աստվածաբանությունը չկարդալ այս շատ հեղիեղուկ բառի ՀԿ-յան կիրառության մեջ: ՆԿ-ը ՀԿ-ի խոստումները դարձրեց տիեզերական (տես՝ Հատուկ Թեմա. ՀԿ-ի ապագայի կանխասումները ընդդեմ ՆԿ-ի կանխասումների):

II. ՀԱՎԻՏՅԱՆԻ ՆԿ-ՅԱՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ՝

Ա. ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՀԱՎԻՏՅԱՆ (aiōnios)

Ռոբերտ Բ. Գրդլսթոունը իր *Հին Կտակարանի Հոմանիշները* /Robert B. Girdlestone *Synonyms of the Old Testament*/ գրքում «հավիտենական» բառի շուրջ մի հետաքրքիր մեկնաբանություն է ներկայացնում.

«ՆԿ-ում *aiōnios* ածականը հավիտենական կյանքի համար կիրառվում է ավելի քան քառասուն անգամ, որը մասամբ համարվում է որպես ներկայիս պարզև, մասամբ էլ՝ ապագայի խոստում: Այն նաև կիրառվում է Հռոմ. 16:26-ում Աստծո անվերջանալի գոյության համար, Եբր. 9:12, 13:20-ում Քրիստոսի քավության անվերջանալի գործության համար, և Հռոմ. 16:25, 2 Տիմ. 1:9, Տիտոս 1:2-ում՝ անցյալ դարերի համար:

Այս բառը Մատթ. 18:8, 25:41, Հուդա 1:7-ում կիրառվում է հավիտենական կրակի իմաստով, Մատթ. 25:46-ում՝ հավիտենական պատժի, Մարկ. 3:29, Եբր. 6:2-ում՝ հավիտենական դատաստանի կամ դատապարտության, 2 Թեսաղ. 1:9-ում՝ հավիտենական կորստի: Տրված հատվածներում այս բառը ակնարկում է վերջնական վիճակ, և ըստ երևույթին կարևորում է, որ երբ այս դատաստանները վրա հասնեն, փորձաշրջանի, փոփոխության կամ մարդու ապագան նորոգելու հնարավորությունը բացարձակապես և հավիտյանս հնարավոր չի լինելու: Մենք շատ քիչ բան ենք հասկանում ապագայի վերաբերյալ, մարդու կյանքի և մնացած ամբողջ գոյի հետ կապի մասին, և անհավատության բարոյական կշռի մասին, երբ դիտարկում ենք հավիտենության լույսի ներքո: Եթե, մի կողմից սխալ է Աստծո Խոսքին որևէ բան ավելացնելը, ապա մյուս կողմից էլ մենք չպետք է որևէ բան պակասեցնենք դրանից. և եթե մենք երբևրև ենք հավիտենական պատժի վարդապետության ներքո, ինչպես Սուրբ Գրքում է գրված, մենք պետք է գոհանանք, մնալով հավատարիմ Քրիստոսի մեջ Աստծո սիրո Ավետարանին, միառժամանակ գիտակցելով, որ գոյություն ունի մութ կողմն էլ, որը մենք ի գորու չենք հասկանալ» (էջ՝ 318-319):

Բ. ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՀԱՎԻՏՅԱՆ (Հունարեն դարձվածք)

Հունարեն դարձվածքաբանական արտահայտություններից մեկն է «դարեր շարունակը» (տես՝ Ղուկ. 1:33, Հռոմ. 1:25, 11:36, 16:27, Գաղ. 1:5, 1 Տիմ. 1:17), որը կարող է արտահայտել եբրայերենի *olam* տերմինը: Տես Ռոբերտ Բ. Գրդլսթոունի, *Հին Կտակարանի Հոմանիշները*, էջ՝ 319-321, և Հատուկ Թեմա. Հավիտյանս ('Olam), էջ՝ ... /Robert B. Girdlestone, *Synonyms of the Old Testament*, pp. 319-321, and Special Topic: Forever ('Olam)/:

Այս արտահայտության հետ կապ ունեցող խոսքերից են «դարեդարը» (տես՝ Մատթ. 21:19, Մարկ. 11:14, Ղուկ. 1:55, Հովհ. 6:58, 8:35, 12:34, 13:8, 14:16, 2 Կորնթ. 9:9) և «բոլոր դարերում» (տես՝

Եփես. 3:21): Թե ոչ մի տարբերություն չկա «հավիտյան» բառի հունարեն այս դարձվածքների միջև: «Դարեր» տերմինը կարող է լինել ՀՈԳՆԱԿԻ փոխաբերական իմաստով ըստ ռաբբիական քերականական կառուցվածքի, որը կոչվում է «ՄԵԾԱՓԱՌՈՒԹՅԱՆ ՀՈԳՆԱԿԻՈՒԹՅՈՒՆ» կամ այն կարող է վերաբերել մի քանի «դարերի» հասկացությանը՝ համաձայն հրեական «ամբարշտության դար /ժամանակաշրջան/», «գալիք դար» կամ «արդարության դար» նշանակության (տես՝ ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ԱՅՍ և ԳԱԼԻՔ ԴԱՐԱՇՐՋԱՆՆԵՐԸ):

Գ. ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՀԱՎԻՏԵՆԱԿԱՆ ՊԱՏԻԺ (դժոխք)

1. Նոր Կտակարան

Միևնույն տերմինը (*aionos*), որը բնութագրում է երկինքը որպես հավիտենական, այն նաև նկարագրում է դժոխքը որպես հավիտենական (տես՝ Մատթ. 18:8, 19:16, Մարկ. 3:29, 9:48, 10:17, Ղուկ. 18:18, Հուդա հ. 7, Հայտն. 20:10, նաև «հավիտենական դատաստան»՝ 2 Թեսաղ. 1:9 և Եբր. 6:2): Դանիել 12:2, Հովի. 5:29 և Գործք 24:15 նկարագրում են թե՛ արդարների և թե՛ ամբարիշտների հարությունը: Հովսեփիոսն ասում է, որ Փարիսեցիները հավատում էին «հոգիների» անմահությանը (տես՝ Հնություններ 18.1,3), սակայն արդարների հարությանը նոր մարմնով, մինչդեռ ամբարիշտները կունենան հավիտենական պատիժ (տես՝ Հրեական Պատերազմներ 2.8,14): Առանց Քրիստոսի եղող մարդկանց կորսված լինելու հավիտենությունը և վերջնականությունը հանդիսանում է ավետարանի քարոզչության, ուսուցանելու և վկայելու անհրաժեշտությունն ու հրատապությունը: Դժոխքը չի ստեղծվել մարդկության համար, այլ Մատանայի և նրա հրեշտակների համար է որպես պահման վայր (տես՝ Մատթ. 25:41):

Հավիտենական դժոխքը ոչ միայն ողբերգություն է ապստամբ մարդկության համար, այլ նաև Աստծո: Ատված մարդկանց ստեղծել է որպես Իր ստեղծագործության գլուխգործոց: Մենք ստեղծվել ենք Նրա պատկերով և նմանությամբ, որպեսզի փոխհարաբերվենք Նրա հետ (տես՝ Ծննդ. 1:26-27, 3:8): Աստծո որոշումը մարդուն ազատ ընտրություն ընձեռնելու համար, հանգեցրեց նրան, որ Աստծո ստեղծագործության նշանակալի տոկոսը Իրենից բաժանվեց: Դժոխքը բաց, արյունահոսող վերք է Աստծո սրտի մեջ, որը երբեք չի բուժվի:

Չարմանալիորեն հենց Հիսուսն Ինքն է խոսում դժոխքի մասին (այսինքն՝ *qetheneth*): Հիսուսի կողմից *Qetheneth* բառի կիրառությունները՝

- ա. կրակ, Մատթ.5:22, 18:9, Մարկ.9:43
- բ. մշտապես, Մարկ.9:48 (Մատթ.25:46)
- գ. կորստյան վայր (թե՛ հոգու և թե՛ մարմնի), Մատթ.10:28
- դ. *Sheol*-ին համարժեք, Մատթ.5:29-30, 18:9
- ե. ամբարշտին բնութագրում է որպես «դժողքի որդի» Մատթ.23:15
- զ. դատավճռի վախճանը, Մատթ.23:33, Ղուկ.12:5
- է. *Qetheneth* գաղափարը համարժեք է երկրորդ մահվանը (տես՝ Հայտն.2:11, 20:6,14) կամ կրակե լճին (տես՝ Մատթ.13:42,50, Հայտն.19:20, 20:10,14-15, 21:8). Հնարավոր է, որ կրակե լիճը դառնա մարդկանց (*Sheol*-ից) և չար հեշտակների (*Tartarus* /*Suprastratus*/, 2 Պետ.2:4, Հուդա հ. 6 կամ անդունդը, տես՝ Ղուկ.8:31, Հայտն.9:1-11, 20:1,3) համար հավերժական բնակավայր:
- ը. այն նախատեսված չէր մարդկանց համար, այլ Մատանայի և իր հրեշտակների, Մատթ.25:41

Այս բառը ՆԿ-ում ևս մեկ անգամ էլ կիրառվում է Հակոբոս 3:6-ում: Աստված ի վերջո մեկուսացնելու է անգիջում չարին և անհավատությանը և վերահաստատի աշխարհը, որն Ինքն էր ուզում ունենալ: Սուրբգրային այդ տեսարանն այսպիսին է՝

- 1) նոր պարտեզ (տես՝ Ծննդոց 1-2, այսինքն՝ դրախտը վերականգնված, տես՝ Ղուկ. 23:43, 2 Կորնթ. 12:14, Հայտն. 2:7)

- 2) նոր քաղաք (այսինքն՝ «նոր Երուսաղեմը», տես՝ Հայտն. 3:12, 21:1-4)
- 3) շատ սենյակներով բնակարան՝ տուն (տես՝ Հովհ. 14:2-3)()

2. Հին Կտակարան

ա. Շեոլ

- 1) Բոլոր մարդիկ գնում են *Sheol* (համանման արմատներ գոյություն չունեն և ստուգաբանությունն անհայտ է, BDB 982, KB 1368), որը մահվան կամ գերեզմանի վերաբերյալ խոսելիս մի արտահայտվելու կերպ է, հիմնականում Իմաստասիրական Գրքերում և Եսայի մարգարեությունում: ՀԿ-ում այն ստվերոտ, գիտակից, սակայն ուրախությունից զուրկ կյանք է (տես՝ Հոր 10:21-22, 38:17):
- 2) *Sheol* բնութագրվում է՝
 - (ա) կապված Աստծո դատաստանի հետ (կրակ), 2 Օր.32:22
 - (բ) դարպասներով բանտ, Հոր 38:17, Սաղմ. 9:13, 107:18
 - (գ) մի երկիր, որտեղից չեն վերադառնում, Հոր 7:9 (մահվան արքադերեն անունը)
 - (դ) խավարի երկիր՝ թագավորություն, Հոր 10:21-22, 17:13, 18:18
 - (ե) լռության վայր, Սաղմ. 28:1, 31:17, 94:17, 115:17, Ես. 47:5
 - (զ) կապված պատժի հետ նույնիսկ նախքան Դատաստանի Օրը, Սաղմ. 18:4-5
 - (է) կապված *Abaddon* (կործանման. տես՝ ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ԱԲԱԴՂՈՆ... ԱՊՈՒԼԻՈՆ) հետ, որտեղ Աստված նույնպես ներկա է, Հոր 26:6, Սաղմ. 139:8, Ամով. 9:2
 - (ը) կապված «Գուբի» (գերեզման) հետ, Սաղմ. 16:10, Ես. 14:15, Եզեկ. 31:15-17
 - (թ) ամբարիշտները ողջ-ողջ իջնում են *Sheol*, Թվոց 16:30,33, Հոր 7:9, Սաղմ. 55:15
 - (ժ) հաճախ մարմնավորվում է որպես մեծ երախ ու ենցող կենդանի, Թվոց 16:30, Առ. 1:12, Եսայի 5:14, Ամբ. 2:5
 - (ի) այդ վայրի մարդիկ կոչվում են Ռեփայիմներ՝ *Repha'im* (այսինքն՝ «մեռյալների հոգիներ»), Հոր 26:5, Առ. 2:18, 21:16, 26:14, Ես. 14:9-11
 - (լ) այնուհանդերձ ՅԱՀՎԵՆ ներկա է նույնիսկ այստեղ, Հոր 26:6, Սաղմ. 139:8, Առակ. 15:11

բ. Գեհեն

- (1) Արտացոլում է ՀԿ-ի հետևյալ արտահայտությունը. «Հինոմի որդիների հարթավայրը» (Երուսաղեմի հարավում): Դա այն տեղն էր, որտեղ փյունիկեցիների կրակի աստծուն՝ *Molech* (Մողորը, BDB 574, KB 591) երկրպագում էին մանկան զոհաբերությամբ (տես՝ 4 Թագ. 16:3, 21:6, 2 Մնաց. 28:3, 33:6), որն արգելված էր ըստ Ղևտ. 18:21, 20:2-5:
- (2) Երեմիան փոխեց այն հեթանոսական պաշտամունքի վայրից ՅԱՀՎԵի դատաստանատեղի (տես՝ Երեմ. 7:32, 19:6-7): Այն դարձավ կրակե, հավիտենական դատաստանի վայրը 1 Ենովք 90:26-27 և Միք. 1:103:

գ. Ռաբբիական Միդրաշը

Հավանաբար բաժանված (ռաբբիներ)

- 1) արդար մասը կոչվում է դրախտ (իրականում երկնքի համար մեկ այլ բառ, տես՝ 2 Կորնթ. 12:4, Հայտն. 2:7), Ղուկ. 23:43
- 2) ամբարիշտ մասը կոչվում է *Tartarus/տարտարոս*, 2 Պետ. 2:4, որը հանդիսանում է չար հրեշտակների պահման վայրը (տես՝ Ծննդոց 6, 1 Ենովք): Այն համադրվում է *Abyss* հետ՝ Ղուկ. 8:31, Հռոմ. 10:7, Հայտ. 9:1-2, 11, 11:7, 17:18, 20:1, 3:
- 3) Հիուսի օրոք հրեաներն իրենց նախահայրերի հեթանոսական երկրպագության մեջ մանկան զոհաբերության մեջ մասնակցություն

ունենալուց այնքան ահաբեկված էին, որ այս վայրը նրանք դարձրեցին Երուսաղեմի համար որպես աղբանոց: Հավիտենական դատաստանին վերաբերող Հիսուսի տված փոխաբերություններից շատերը ծագում են այս աղբավայրից (կրակ, ծուխ, որդեր, զարշահոտություն, տես՝ Մարկ.9:44,46): *Gehenna* (Գեհեն) տերմինը օգտագործվել է միայն Հիսուսի կողմից (բացատրությամբ Հակ.3:6):

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ . ԱՍՏԾՈՒ ԵՐԿՈՒ ԳՐՔԵՐԸ SPECIAL TOPIC: THE TWO BOOKS OF GOD

Ա . Աստված հայտնել է Իր մասին երկու կերպ՝

1. բնության (այսինքն՝ ստեղծագործության, տես՝ Սաղմ . 19:1-6, որը կոչվում է «բնական հայտնություն»)
2. Սուրբ Գրքի (տես՝ Սաղմ . 19:7-14, կոչվում է «հատուկ հայտնություն»)
Ահա թե ինչու ես չեմ կարծում, որ պետք է գիտության և հավատքի միջև ի վերջո ընդհարում լինի, քանի որ ամբողջ ճշմարտությունը Աստծո ճշմարտությունն է: Խնդրում եմ նայեք Ծննդոց 1-11 գլուխների իմ մեկնությունները առցանց և անվճար հեռակալ հղումով՝ www.freebiblecommentary.org

Բ . Դան . 7:10 և Հայտն . 20:12-ում նշվում են երկու գրքեր:

1. «Գործերի գիրքը», որը պարունակում է մարդկանց բոլոր շարժառիթներն ու գործերը՝ թե՛ լավ և թե՛ վատ: Ինչ որ իմաստով սա Աստծո հիշողության նկարագրություն է և որ մի օր բոլոր մարդիկ հաշիվ են տալու իրենց Արարչին կյանքի պարգևի իրենց տնտեսության հարցում:
ա . Սաղմ . 56:8, 139:16
բ . Եսայի 65:6
գ . Մադաքիա 3:16
դ . Հայտնություն 20:12-13
2. «Կյանքի Գիրքը» թվարկում է նրանց, ովքեր զոջացող, հնազանդ հավատքի փոխհարաբերություն ունեն ՅԱՀՎԵԻ՝ Հիսուսի հետ: Սա Աստծո հիշողության նկարագրությունն է այն մարդկանց համար, ովքեր փրկված են և երկնքով կապված:
ա . Ելից 32:32-33
բ . Սաղմ . 69:28
գ . Եսայի 4:3
դ . Դանիել 12:1
ե . Փիլիպպեցիների 4:3
զ . Եբրայեցիների 12:23
է . Հայտնություն 3:5, 13:8, 17:8, 20:12, 15, 21:27
ը . նաև նշվում է 1 Ենովք 47:3, 81:1-2, 103:2, 108:3-ում

Այս գրքերը ներկայացնում են Աստծո հավատարմությունը Իր Խոսքին: Նրանք, ովքեր ապստամբում են և մերժում, Նա հիշում է նրանց մեղքերը . նրանք, ովքեր ապաշխարում են, հավատում, հնազանդվում և հարատևում, Նա մոռանում է նրանց մեղքերը (տես՝ Սաղմ . 103:11-13, Եսայի 1:18, 38:17, 43:25, 44:22, Միքիա 7:19): Սա տալիս է մեծ երաշխիք և վստահություն Աստծո անփոփոխ, ողորմած բնավորության, Նրա խոստումների և հոգածության վրա: Աստված վստահելի է: Այն ինչ Նա հայտնել է Իր մասին ճշմարիտ է:

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ . ԻՍՐԱՅԵԼԻ ԱՍՏԾՈՒ ԲՆԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ (ՀԿ)

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ . ԶՐԻԱՏՈՆԵԱԿԱՆ ԵՐԱՇԽԻՔ

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ . ԴԱՏԱՍԱՆԸ ՆԿ-ՈՒՄ

Սաղմոս 9:7 խիստ հակադրության մեջ է Սաղմ. 9:5-6-ի հետ: Ապստամբ ազգերը ժամանակավոր են, բայց Իսրայելի Աստվածը՝ մշտապես գահակալած (BDB 442, KB 444, *Qal* ԱՆԿԱՏԱՐ, տես՝ Սաղմ. 10:16, 29:10):

Սաղմ. 9:7-ի երկրորդ ԲԱՅԸ՝ «հաստատեց/պատրաստեց» (BDB 465, KB 464), *Polel* ՎԱՂԱԿԱՏԱՐ է, որը մատնանշում է Նրա մշտնջենական գահը:

9:8 «Նա դատելու է աշխարհն արդարությամբ» Դարձյալ աստվածաբանական հարցը «աշխարհ» (BDB 385) բառի նշանակությունն է: Սաղմ. 96:13 և 98:9-ում այս բառը զուգահեռ է *erets* (BDB 75, տես՝ Հատուկ Թեմա. Հող, երկիր, երկրագունդ) բառին: Այն պետք է որ վերաբերի այդ օրերի «հայտնի» աշխարհին: Սակայն, ՆԿ-ից այս հասկացությունը իր մեջ բովանդակում է ամբողջ մոլորակը (այսինքն՝ Հովհ. 3:16):

9:9 «ապավեն/ամրոց» ԲԱՅԸ (BDB 960) նշանակում է «բարձր լինել»: ԳՈՅԱԿԱՆԸ կիրառվում է սովորաբար Աստծո համար որպես բարձր, ամուր և ապահով ամրոց (տես՝ Սաղմ. 9:9 /երկու անգամ/, 18:2, 46:7, 11, 48:3, 59:9,16,17, 62:2,6, 94:22, 144:2): Սա դարձվածք է ապահովության և պաշտպանության համար: Հավատարիմ հետևորդի համար (տես՝ Սաղմ. 9:10) մեր Աստվածը մեր ամրոցն է և միայն Նա է:

Ուշադրություն դարձրե՛ք, որ Սաղմ. 9:9-ի «նեղության պահերին/ժամանակ» արտահայտությունը նորից հայտնվում է Սաղմ. 10:1բ-ում: ՀԿ-ում այն միայն այստեղ կարելի է գտնել: Որոշ կասկածներ կան «նեղություն» (BDB 131) թարգմանված բառի նշանակության շուրջ: Երեմ. 14:1 և 17:8-ում այն նշանակում է «չորություն/երաշտ», սակայն այդ նշանակությունն այստեղ չի համապատասխանում: Հիշեք, որ բառերը նշանակություն են ստանում միայն նախադասության մեջ, իսկ նախադասությունները՝ գրական բաժիններում:

9:10a Դոեզիայի այս տողն արտահայտում է կարևոր աստվածաշնչյան իրողություն: Ստորև ես ավելացրել եմ իմ Եսայի 26:3-4-ից իմ մեկնաբանությունները:

Եբրայերեն «ճանաչել» բառի համար տես՝ Հատուկ Թեմա. Ճանաչել:

Եսայի 26

Եսայի 26:3 «Կատարյալ խաղաղության մեջ կպահես»

1. հավատացյալի միտքը մնում է ՅԱՀՎԵԻ վրա (BDB 701, KB 759, *Qal* ԿՐԱՎՈՐԱԿԱՆ ԴԵՐԲԱՅ, սակայն կիրառված է ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ իմաստով, տես՝ 1 Մնաց. 29:18):
2. ՅԱՀՎԵՆ պահում է նրան (BDB 665 I, KB 718, *Qal* ԱՆԿԱՏԱՐ, ուխտի կապն ունի երկու մասնակից, տես՝ Հատուկ Թեմա Եսայի 1:19-ում):
3. «Կատարյալ խաղաղություն» խոսքը *shalom*-ի կրկնակին է (BDB 1022, տես՝ DSS): Բառերի երկու անգամ նմանատիպ կրկնությունը շատ տարածված է Եսայի մարգարեության այս բաժնում:

❖ «**Քեզ է հուսացել**» «Հուսացել/վստահել» (BDB 105, KB 120, *Qal* ԿՐԱՎՈՐԱԿԱՆ ԴԵՐԲԱՅ) բառը նշանակում է «վստահել ՅԱՀՎԵԻՆ» (տես՝ Ես. 12:2, 26:4, 36:15, 37:10, 50:10): Ուշադրություն դարձրե՛ք, որ հաջորդ համարում նույն բառը կիրառված է որպես ՀՐԱՄԱՅԱԿԱՆ: Սա շատ կարևոր աստվածաբանական հասկացություն է Աստծո հետ մարդու անձնական փոխհարաբերության անհրաժեշտության, և ոչ թե միայն հնազանդության համար: Երկուսն էլ կենսական կարևորության են:

26:4 «Հավիտյան ՏԻՐՈՉԸ հուսացե՛ք» ԲԱՅԻ (BDB 105, KB 120, *Qal* ՀՐԱՄԱՅԱԿԱՆ) համար տես՝ ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. Հավատալը, վստահելը, հավատքը և հավատարմությունը Հին Կտակարանում Ես. 22:23-ում:

Աստվածության անունը Ես.26:4-ի առաջին տողում ՅԱՀՎԵ է. երկրորդ տողում՝ *Yah* ՀԱՊԱՎՈՒՄԸ և ՅԱՀՎԵ, տես՝ Հատուկ Թեմա. Աստծո անունները:

«Հավիտյան» (BDB 723 I) տերմինը, առաջինը ՀՈԳՆԱԿԻ թվով և ապա ԵՉԱԿԻ թվով (ԿԱԶՄՈՒԹՅՈՒՆԸ, տես՝ Ես.65:18, Սաղմ.83:17, 92:8): Այս կազմությունը, «հավիտենական» (BDB 761) բառի հետ միասին՝ կիրառված ՅԱՀՎԵԻ համար, ենթադրում է անձնական փոխհարաբերություն այս կյանքից հետո էլ (տես՝ Ես.26:14, 19, Սաղմ.23:6):

❖ **«մենք ունենք հավիտենական Վեմ»** «Վեմ» բառը փոխաբերություն է Աստծո անփոփոխ բնավորության համար (տես՝ Սաղմ.18:1, 2, Ես.17:10, 30:29, 44:8):

9:10բ Ի՛նչ հրաշալի հայտարարություն է ՅԱՀՎԵԻ հավատարմության վերաբերյալ: Սա պարբերաբար կրկնվող թեմա է Սաղմունքում (տես՝ Սաղմ.37:28, 94:14): Հավատացյալների հույսը ողորմած Արարչի անփոփոխ բնավորությունն է (տես՝ Սաղ.3:6):

**ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ԻԱՐԱՅԵԼԻ ԱՍՏԾՈՒ ԲՆԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԳԾԵՐԸ (ՀԿ)
SPECIAL TOPIC: CHARACTERISTICS OF ISRAEL'S GOD (OT)**

1. Գթառատ (BDB 933, KB 1216)- Ելից 34:6, 2 Օր.4:31, 2 Մնաց.30:9, Սաղմ.86:15, 103:8, 111:4, Նեեմ.9:17, 31, Հովել 2:13, Հովնան 4:2
2. Ողորմած (BDB 337, KB 333) – Ելից 34:6, 2 Մնաց.30:9, Սաղմ.86:15, 103:8, 111:4, Նեեմ.9:17, 31, Հովել 2:13, Հովնան 4:2
3. Դանդաղ է բարկանալու մեջ (BDB 74 ԿԱԶՄՈՒԹՅՈՒՆԸ BDB 60) – Ելից 34:6, Սաղմ.86:15, 103:8, 111:4, Նեեմ.9:17, 31, Հովել 2:13, Հովնան 4:2
4. Առատ անմնացող սիրով (BDB 912 I ԿԱԶՄՈՒԹՅՈՒՆԸ BDB 338) – Ելից 34:6-7, Սաղմ.86:15, 103:8, Նեեմ.9:17, Հովել 2:13, Հովնան 4:2, տես՝ Ելից 34:6-7, Սաղմ.86:15, 103:8, Նեեմ.9:17, Հովել 2:13, Հովնան 4:2, տես՝ ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ԲԱՐԵԳԹՈՒԹՅՈՒՆ (HESED)
5. Հավատարիմ (կամ «ճշմարտություն», BDB 54, տես՝ ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՀԱՎԱՏԱԿԱՎԱՍՏԱՀՈՒԹՅՈՒՆ, ՀԱՎԱՏՔ և ՀԱՎԱՏԱՐՄՈՒԹՅՈՒՆ ՀԿ-ՈՒՄ) – Ել.34:6, Սաղմ.86:15, Երեմ.42:5
6. Առատ ներողամտությամբ (BDB 699, KB 757) – Նեեմ.9:17
7. Չի լքում նրանց (BDB 736 I, KB 806) – Նեեմ.9:17, 31
8. Ապաշխարում է չարից (BDB 636, KB 688, *Niphal* ԴԵՐԲԱՅ + BDB 948) – Հովել 2:13, Հովնան 4:2
9. Մեծ Աստվածը (BDB 42, 152) – Նեեմ.1:5, 9:32
10. Մեծ և ահավոր (BDB 152, 431) – Նեեմ.1:5, 4:14, 9:32
11. Պահում է ուխտը (BDB 1036, 136) – Նեեմ.1:5, 9:32
12. Անմնացող սեր (BDB 338) – Նեեմ.1:5, 9:32 (տես՝ ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ԲԱՐԵԳԹՈՒԹՅՈՒՆ (hesed))

Այս բոլորը նկարագրում են Աստծո զգացողությունները Իր ժողովրդի՝ Իսրայելի հանդեպ (տես՝ Ելից 34:7): Նրա բնավորությունը չի փոխվում (տես՝ Սաղ.3:6), ուստի, սրանք նաև գործադրվում են Իր բոլոր հավատարիմ հետևորդների հանդեպ (այսինքն՝ 2 Կորնթ.1:3):

NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. ՍԱՂՄՈՍ 9:11-16

- ¹¹Սաղմո՛ս երգեցե՛ք ՏԻՐՈՋԸ, որ Սիոնում է բնակվում, ժողովրդի մեջ պատմեցե՛ք Նրա կատարածները:
- ¹²Երբ արյան համար հաշիվ է պահանջում, հիշում է նրանց, Չի մոռանում խոնարհների աղաղակը:

¹³Ո՛վ ՏԵՐ, ողորմի՛ր ինձ, ինձ ատողներից *կրած* նեղությունս տե՛ս,
 Դու, որ ինձ մահվան դռներից բարձրացնում ես,
¹⁴Որպեսզի Քո բոլոր օրհնությունները պատմեմ Սիրոնի դստեր դարպասներում .
 Քո փրկությամբ եմ ուրախանալու:
¹⁵Հեթանոսներն իրենց շինած գուրի մեջ ընկղմվեցին,
 Իրենց թաքուն լարած որոգայթի մեջ իրենց ոտքը բռնվեց:
¹⁶Իրենց կատարած դատաստանով է ՏԵՐԸ ճանաչվում .
 Ամբարիշտն իր ձեռքի գործերով է որոգայթն ընկնում: (Հիկկայոն, Սեյա)

9:11-12 ՅԱՀՎԵՆ փառաբանվում է Իր արդարության համար (տես՝ Սաղմ. 9:12, 15-16):

1. Նա արյան վրեժ է լուծում
2. Նա չի մոռանում նեղյալների՝ խոնարհների աղաղակը:

Նրա արդարությունը երևում է ամբարշտի չար ծրագրերում, որոնցով նրանք իրենց են որոգայթի մեջ գցել (տես՝ Սաղմ. 9:15-16):

9:11 «որ Սիրոնում է բնակվում» Սիրոնը Երուսաղեմում բլուր է, որի վրա կառուցված էր Հեբուսացիների ամրոցը, որը Դավիթը գրավեց: Նա այս բլրի վրա կառուցեց իր պալատը: Հետագայում այն նախագիծ դարձավ ամբողջ քաղաքի համար:

Երուսաղեմը, և հատկապես Մորիա լեռան վրա գտնվող տաճարը, դարձավ այն վայրը, որտեղ ՅԱՀՎԵՆ «բնակվեց», *Քերուլքեների* թևերի միջև՝ ուխտի տապանակի վրա: Այս վայրը իրականացնում է 2 Օրինացում հաճախ կրկնվող այս արտահայտությունը. «այն տեղը, որ ՅԱՀՎԵՆ Իր անունը կբնակեցնի»:

9:12

NASB

NKJV, NRSV

NJB, REB

JPSOA

«Նա, որ արյուն է պահանջում»

«Նա արյան վրեժ է լուծում»

«արյան վրիժառուն»

«Նա, որ արյունահեղություն է պահանջում»

Այս արտահայտությունը կապված է Ծննդ. 9:5-6-ի հետ: Կյանքը պարզև է Աստուծոց: Նա, ով խլում է այդ պարզևը, պետք է հաշիվ տա Աստծո առջև և վճարի իր սեփական կյանքով (տես՝ 2 Օր. 32:43):

Ավելի ուշ Եբրայական մտածելակերպում սա կատարելագործվեց և դարձավ «արյան Վրեժ» արտահայտություն (այսինքն՝ Հեսու 20:3,5,9):

❖ **«հիշում է նրանց . . . չի մոռանում»** Նկատելք ինչիսես է «հիշում է» գուգահեռվում «մոռանալ» (ժխտականի) հետ: Նա չի մոռանա Իր ժողովրդին:

9:13-14 Ամբարիշտը փնտրում է սաղմոսերգուի կյանքը (այսինքն՝ Թագավորի), սակայն ՅԱՀՎԵՆ ազատեց նրան: Այժմ նա ուզում է փառաբանել ՅԱՀՎԵՆԻ խորանում՝ տաճարում («որ բնակվում է Սիրոնում» Սաղմ. 9:11):

1. «որպեսզի պատմեմ» - BDB 707, KB 765, *Piel* ԸՂԶԱԿԱՆ
2. «ուրախանալու եմ» - BDB 162, KB 189, *Qal* ԸՂԶԱԿԱՆ

9:13 «մահվան դռներ» *Sheol* (տես՝ Սաղմ. 6:5-ի ամբողջական գրառումը) նկարագրված է որպես՝

1. բաց գերեզման՝ գուր (տես՝ Ելից 15:12, Թվոց 16:32, 26:10, Սաղմ. 124:3, Առակ. 1:12)
2. գիշատիչ կենդանի (տես՝ Ես. 5:14, Ամբ. 2:5)
3. դարպասներով քաղաք (տես՝ Հոբ 38:17, Սաղմ. 107:18, Ես. 38:10, Մատթ. 16:18) կամ
4. դարպասներով բանտ (տես՝ Հայտն. 1:18, 9:1, 20:1)

9:14 «Միոնի դատեր դարպասներում» Ակնհայտ հակադրություն կա «մահվան դարպասների»՝ Սաղմ. 9:13գ, և Երուսաղեմի՝ տաճարի դարպասների (Սաղմ. 9:14բ-ում) միջև: Առաջինի դեպքում չկա հիշատակ, սակայն երկրորդի դեպքում կա ՅԱՀՎԵԻ մասին փառաբանություն և վկայություն:

9:15-16 Նկատե՛ք վեց ՎԱՂԱԿԱՏԱՐՆԵՐԻ շղթան: Շեշտադրությունը թշնամու բանակի պարտությունն է ՅԱՀՎԵԻ կողմից (այսինքն՝ Նվաճման Սուրբ Պատերազմի տեսարանը):

9:15 Նկատե՛ք, որ սաղմոսերգուի հակառակորդները ազգերն են (տես՝ Սաղմ. 9:17) և ոչ թե անհատները: Հետևաբար, սա պետք է լինի թագավոր, այնպես որ ավանդական նախաբանը հավանաբար ճիշտ է:

9:16 ՀԿ-ում Աստծո բնավորությունը ժամանակի մեջ հայտնվում է Նրա գործողությունների միջոցով:

1. շնորհքը, ողորմությունը և սերը ուխտի ժողովրդի հետ
2. դատաստանն ու բարկությունը նրանց թշնամիների հանդեպ

Նկատե՛ք ամբարիշտների ծրագրերի հետադարձումը: Այն ինչ նրանք ծրագրել էին ուրիշների դեմ, պատահեց հենց իրենց: Արդարությունը ներմուծված է Աստծո ստեղծած կարգուկանոնի մեջ:

NASB, NKJV,	«որոգայթն ընկնում»
NRSV, JPSOA	«թակարդն ընկնում»
TEV, REB	«ծուղակն ընկնում»
NJB	«թակարդ»
LXX	«թակարդ»

MT տալիս է «գարկում» BDB 669, KB 723, *Qal* ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ԴԵՐԲԱՅ (ՀԿ-ում միայն այստեղ է): Բոլոր անգլերեն թարգմանություններ այն դիտարկում են *Niphal* ՎԱՂԱԿԱՏԱՐ BDB 430, KB 432, «ծուղակը գցել» կամ «որսալ» իմաստով: UBS Տեքստային Նախագիծը (էջ՝ 171) տալիս է MT-ին «C» գնահատական (բավականին կասկածելի):

❖ «Հիկկայոն» BDB (212, տես՝ Ներածություն, Սաղմոսներ, VII) սահմանում է սա որպես՝

1. հնչեղ երաժշտություն (տես՝ Սաղմ. 92:3)
2. խորհրդածություն, մտորում (տես՝ Սաղմ. 19:14)

Ողբ 3:62-ում այն թարգմանվում է «մրմունջ» (KB 238):

❖ «Սեյա» Տես՝ Սաղմոս 3:2-ի գրառումը:

NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. ՍԱՂՄՈՍ 9:17-20

- ¹⁷Ամբարիշտները դժոխք են նետվելու,
Նաև այն բոլոր ազգերը, որ մոռանում են Աստծուն:
¹⁸Քանի որ կարիքավորը ամեննին չի մոռացվելու,
Աղքատի ակնկալությունը հավերժ չի կորչելու:
¹⁹Ելի՛ր, ո՛վ ՏԵՐ, մարդը թող չգորանա .
Թող հեթանոսները դատվեն Քո առաջ:
²⁰Երկյուղի՛ մատնիք նրանց, ո՛վ ՏԵՐ,
Թող ազգերն իմանան, որ իրենք *պարզապես* մարդ են: Սեյա:

9:17-18 Ինչպես որ ամբարիշտները հիմարաբար են ապրում (այսինքն՝ գնում են դեպի *Sheol*), կարիքավորի (BDB 2) ու աղքատի (BDB 776) օգնությունը լինելու է ՅԱՀՎԵԻՑ:

9:17 «բոլոր ազգերը, որ մոռանում են Աստծուն» Իսրայելի թշնամիների մեծ մասը շրջապատող ազգերից էին, որոնք ՅԱՀՎԵԻ մասին որոշ չափով գիտեին: «Մոռանալ» ԲԱՅԸ (BDB 1013)

ենթադրում է, որ նրանք ճշմարտությունից հեռացել էին և ըստ երևույթին երկրպագում էին կուռքերի:

9:19-20 Այս վերջին երկու տողերը ներառում են ՅԱՀՎԵԻ գործելուն վերաբերող մի շարք հրամաններ:

1. Ելի՛ր – BDB 877, KB 1086, *Qal* ՀՐԱՄԱՅԱԿԱՆ (հակադրված Սաղմ. 9:4բ, 7, որտեղ Նա գահակալած սպասում է, թե երբ են կանչելու իրեն գործելու որպես Աստվածային Հզոր Ռազմիկ):
2. թող մարդը չգորանա – BDB 738, KB 808, *Qal* ԱՆԿԱՏԱՐ կիրառված ՀԱՅՑԱԿԱՆ իմաստով
3. թող հեթանոսները դատվեն Քո առաջ – BDB 1047, KB 1622, *Niphal* ԱՆԿԱՏԱՐ՝ կիրառված ՀԱՅՑԱԿԱՆ իմաստով
4. երկյուղի մատնիր նրանց – BDB 1011, KB 1483, *Qal* ԱՆԿԱՏԱՐ
5. թող ազգերն իմանան, որ իրենք պարզապես մարդ են – BDB 393, KB 390, *Qal* ԱՆԿԱՏԱՐ՝ կիրառված ՀԱՅՑԱԿԱՆ իմաստով (տես՝ Սաղմ. 62:9, 90:5-6, 103:14, Ես. 40:7-8):

9:20 «Սեյա» Տես Սաղմոս 3:2-ի գրառումը:

ՔՆՆԱՐԿՄԱՆ ՀԱՐՑԵՐ

Սա ուղեցույց հանդիսացող սերտողության մեկնաբանությունն է, որը նշանակում է, որ դուք եք պատասխանատու Աստվածաշնչի ձեր մեկնաբանության համար: Մեզնից յուրաքանչյուրը պետք է քայլի իր ունեցած լույսով: Դուք, Աստվածաշունչը և Սուրբ Հոգին եք մեկնաբանության մեջ առաջին տեղում: Դուք չպետք է այն զիջեք մեկնաբանին:

Քննարկման այս հարցերը կազմվել են ձեզ օգնելու, որպեսզի մտածեք գրքի այս բաժնի գլխավոր հարցերի շուրջ: Իրանք մտածելու տեղիք տվող հարցեր են և վերջնական չեն:

1. Ինչո՞ւ է Սաղմ. 9:3-ը դատարանի տեսարան:
2. Ի՞նչ կապ ունեն Սաղմ. 9:5-ի «ազգերը» և «ամբարիշտները»:
3. Սահմանե՛ք Սաղմ. 9:13 և 14-ում տարբեր «դարպասները»:
4. Ի՞նչ կապ ունեն *Sheol* –ը և Գուրը: